ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ

14 օգոստոսի 2018թ.

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում եմ Ձեզ, որ 2018 թվականի հուլիսի 4-ին իմ կողմից Ձեզ է ներկայացվել դիմում, որով տեղեկացրել եմ, որ 2018 թվականի օգոստոսի 14-ին պատրաստվում եմ համայնքի ավագանուն ներկայացնել առաջարկ լիազորություններս վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Այդ կապակցությամբ տեղեկացնում եմ, որ 2018 թվականի օգոստոսի 10-ին Արմավիրի մարզի Արշալույս համայնքում տեղի ունեցած ուժեղ կարկուտի և փոթորիկի հետևանքով համայնքի բնակիչներին պատճառվել է անդառնալի վնասներ, համայնքապետարանի աշխատակազմը այժմ զբաղված է ուսումնասիրություններ կատարելով և վնասի չափերը արձանագրելով:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի համաձայն համայնքի ղեկավարը պարտավոր է աջակցել գյուղատնտեսության բնագավառում համայնքի բնակչությանը և ձեռնարկել համապատասխան միջոցներ աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Համայնքի բնակչությանը աջակցելու և աղետի ռիսկերի նվազեցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունով պայմանավորված նպատակահարմար չեմ գտնում համայնքի ավագանուն ներկայացնել առաջարկություն իմ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.51/14337-18
20 08 2018թ.